BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street
Area 16, 5th floor
0010 Yerevanepublic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307
Tel: +374(10) 544-309
Fax: +374(10)562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

23.04.2014թ.

N 011407

Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ե Մ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Գ.Գեորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ ԱՁ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մենք իրականացրել ենք «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների և հաշվարկների համար տնօրինության պատասխանատվությունը

Սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման (ՖՀՍՍ) համար պատասխանատու է տնօրինությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքում առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

BAKER TILLY
ARMENIA

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունը իրականացված աուդիտի հիման վրա սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն արտահայտելն է: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա, ներառյալ՝ խաբեության կամ սխալի հետևանքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները պատշաճ և բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արմենիա Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Աուդիտոր

Կ.Ասսիլյան Kerop Assilian

23.04.2014թ.